

իրբեւ յաջորդ որոշած, ընտրած, հաճած, խոստացած եւ մատնացոյց ըրած էր, եւ թէ ժողովք բարունեաց զիսահակ Կաթողիկոս օրհնած են, որ եւ օրհնութեան գիր ղրկած է (Ի Կ. Պոլիս) . սակայն տարի մ'եաջն արդէն Էջմիածնի վարդապետները զՆղիազար կը հրաւիրեն որ երթայ Էջմիածին դահակալէ . . . վասնզի կը վախնային, որ վերջինս իր անհանդարտ բնաւորութեամբ չնորոգէ այն խռովութիւնները, զոր յարուցած էր Յակոբայ Կաթողիկոսութեան ատեն: Եւ առաջինին Սահակ . . . կամօք հաւանութիւն տուաւ սոյն ընտրութեան» (21):

Նղիազարի Կաթողիկոսութեան ժամանակ կը շարունակուի ազատագրական շարժումը: Զուղայեցիի մահէն յետոյ, միւս պատուիրակները կը վերադառնան Հայրենիք, բացի Իսրայէլ Օրիէն, որ Եւրոպա կ'անցնի եւ կը դիմէ արքունիքէ արքունիք ի խնդիր Հայաստանի ազատագրումին. կ'երթայ յաջորդաբար Վենետիկ ու Բարիզ, Պալատինա, Վիեննա եւ Էջմիածին, Գանձասար ու Պալատինա, Հռոմ եւ Ֆլորանս, Վիեննա եւ Մոսկուա, Վիեննա, Պալատինա, եւ Մոսկուա, հուսկ յետոյ իրբեւ ուսական դեսպան կ'անցնի Սպահան: Դիւանագիտական տենդոտ գործունէութիւն մը

(21) Հ. Գ. Գալսեմբէարեան, «Հանդէս Ամսօրեայ», ԻԶ. Տարի, 1912, Հոկտ. քիւ 10. սիւն. 578-580: